Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

68/4164/ 13 ապրիլի 2012 ուրբաթ

ISSN 1829-2224
12056
9 771829 222003

Ա

## Խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը

Պարզ հասկանալու համար երեւույթի վրա պետք է նայել բնության ու պատմության օրենքների բարձրությունից, էն լայն, խաղաղ ու խոր հայացքով, որ նրանք միայն կարող են տալ: Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փչանում: Էսպես է բնության օրենքը:

Էն հասարակ վարունկի թուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում՝ էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում: Նրա համար էլ ձեզ թույլ չեն տալ, որ նրա թուփը ոտի տակով անեք: Էնպես դառնանում ու դաժանանում է եւ մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է տալի, հայտնվում է ե՛ւ աչքերում, ե՛ւ դեմքին, ե՛ւ խոսքերում, ե՛ւ գործերում, ամեն տեղ, ամեն ասպարեզում, ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո՛, շատ բան, ե՛ւ «հառաջադիմություն», ե՛ւ «կուլտուրա», ե՛ւ «մամուլ», ե՛ւ «գրականություն», ե՛ւ «դպրոց», ե՛ւ «բարեգործություն», բայց էդ բոլորը նրանից ճիճվի կերած պտուղի նման են, եւ տառապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի: Էդ տեսակ կյանքը կտա եւ տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց է՛ն, ինչը որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրապուրիչ եւ մի ժողովուրդ թանկ ու համակրելի:

Արդ՝ եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն եւ առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ եւ չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, եւ դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք ե՛ւ մեր սրտերում, ե՛ւ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը: Ապա թե էդ փրկարար գիտակցությանը կհետեւեն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը:

Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետեւ ներսից ենք փչացած:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ
1910թ.

## Սպանել են Գյումրու քաղաքապետի փեսային





Մեր տեղեկություններով՝ երեկ Սեւ Ղուլ կոչվող ամրոցի մոտ սպանել են Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի աղջկա նշանածին՝ Կարեն Եսայանին: «Մերսեդես» մակնիշի 16 OL 850 համարանիշի ավտոմեքենայի մեջ ոստիկանները հայտնաբերել են հրազենային վնասվածքներով 27-ամյա երիտասարդի դիակը: Ըստ «Առավոտի» աղբյուրների՝ քաղաքապետը իր միջնեկ դստերը նշանել էր օրերս, ու փաստացի այս երիտասարդը դեռ չէր հասցրել մտնել փեսայի դերի մեջ: Ի դեպ, մեզ հավաստիացնում են, որ երիտասարդի ծնողները բնակվում են ԱՄՆ-ում: Թե ո՞րն է եղել նրան կյանքից զրկելու պատճառը, դեռ անհայտ է, սակայն սպանության մեջ կասկածվում է Անիի տարածաշրջանի նախկին ոստիկանապետ Սամվել Սարգսյանի որդին, որը, ըստ մեր ոստիկանական աղբյուրների, դեպքի վայրից դիմել է փախուստի: Նշենք, որ Անիի տարածաշրջանի նախկին ոստիկանապետը քավոր-սանիկական հարաբերությունների մեջ է գտնվում ԱԺ ԲՀԿ-ական պատգամավոր Մարտուն Գրիգորյանի ընտանիքի հետ, երիտասարդ պատգամավորի հայրը՝ Կամո Գրիգորյանը, նրանց քավորն է: Եթե ի նկատի ունենանք, որ ՀՀԿ-ական քաղաքապետի ու ԲՀԿ-ական պատգամավորի ջրերը մի առվով չեն հոսում, չի բացառվում, որ սպանությունը կատարված լինի նաեւ քաղաքական հողի վրա: Սակայն սա սոսկ Գյումրիում տարածված վարկած է, իրականությունը կպարզվի հետաքննությունից հետո:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
Լուսանկարները՝ ԳԱԳԻԿ ՇԱՄՇՅԱՆԻ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Ռուստամյանը մոռացե՞լ է, որ ՀՅԴ-ում հետեւից չեն խոսում

Այն բանից հետո, երբ «Ժառանգության» վարչության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը ապրիլի 11-ին հեռացել էր միջկուսակցական միասնական ընտրական շտաբի նիստից, ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանն ասել էր. «Շարքերը բյուրեղանում են»: Ռուբեն Հակոբյանը, որը հիշեցնենք՝ ժամանակին ինքն էլ ՀՅԴ Հայաստանի կառույցի ղեկավարն էր՝ «Առավոտին» այս առնչությամբ ասաց. «Ցավում եմ, որ Արմենը 20 տարի լինելով քաղաքականության մեջ՝ այդպես էլ չհասկացավ քաղաքական գործչի եւ քաղաքական չինովնիկի տարբերությունը եւ մնաց որպես ընդամենը քաղաքական չինովնիկ: Արմենը երեւի մոռացել է, որ Դաշնակցության մեջ հետեւից չեն խոսում»:

### Աբովյանցին՝ Տեր-Պետրոսյանին. «Վաաա՛յ, ինչ էլ բոյով մարդ է Լեւոնը»

Աբովյանում մի ծեր մարդ, որը եկել էր ՀԱԿ-ի հավաքին եւ առաջին շարքերում էր, իր կողքին կանգնած ընկերոջը հարցրեց՝ «Ըստոնցից Լեւոնը ո՞րն ա»: Երբ կողքինը ցույց տվեց Լեւոն Տեր-Պետրոսյանին, ասաց՝ այն ծխողն է, պապիկը հիացավ՝ «Վաաա՛յ, ինչ էլ բոյով մարդ է Լեւոնը»: Մենք պապիկից հետաքրքրվեցինք՝ այսքան տարի, հայրիկ ջան, չէի՞ք տեսել Լեւոն Տեր-Պետրոսյանին, նա պատասխանեց. «Մի-երկու անգամ տելեվիզորով տեսել եմ, էն թվերին, դրանից հետո Լեւոնին ո՞վ է տեսել»:

ՀԱԿ-ի հավաքի մասին կարդացեք էջ 3:

### Գյումրու ոստիկանության մոտ վրաերթից մահացել է ՀԿԳ քննիչը

Երեկ գիշեր, ժամը 01-ի սահմաններում, Գյումրի քաղաքի Նժդեհի պողոտայում՝ ոստիկանության Գյումրիի բաժնի շենքի դիմաց, անհայտ մակնիշի եւ համարանիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզի քննչական բաժնի հատկապես կարեւորագույն գործերով ավագ քննիչ Վահրամ Բեյբությանին եւ թողնելով անօգնական՝ դիմել փախուստի: Ինչպես դեպքի վայրից հայտնեց ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոցի ճանապարհին Բեյբությանը մահացել է: Կարճ ժամանակում Գյումրու ոստիկանները հայտնաբերել են փախուստի դիմած վարորդին եւ նրա «ՎԱԶ 21011» մակնիշի 45 ՍՕ 132 համարանիշի ավտոմեքենան: Վ. Բեյբությանը երեկ Գյումրիում տեղի ունեցած աղմկահարույց սպանության գործով քննչական խմբի անդամներից էր:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 13-ին, «Պոստ Սկրիպտում» մամուլի ակումբի հյուրն է ԲՀԿ անդամ Լյովա Խաչատրյանը:

### Եղանակ

Երեւան + 5 + 20, Շիրակ - 3 + 11, Կոտայք - 3 + 11, Գեղարքունիք - 3 + 11, Լոռի 0 + 19, Տավուշ + 2 + 21, Արագածոտն լեռներ - 3 + 11, Արագածոտն նախալեռն. + 3 + 19, Արարատ + 4 + 20, Արմավիր + 4 + 20, Վայոց Ձոր լեռներ - 3 + 11, Վայոց Ձոր նախալեռն. - 4 + 20, Սյունիքի հովիտներ + 5 + 23, Սյունիքի նախալեռներ + 2 + 17

# Ներսես Նազարյանի ընկերներն ինքնաթիռներով գալիս են ընտրություններին մասնակցելու

ՀՀԿ եւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մայրաքաղաքային նախընտրական հանդիպումներին, ի թիվս քաղաքային եւ համայնքային իշխանությունների, ներկա է լինում նաեւ Երեւան քաղաքի ոստիկանապետ Ներսես Նազարյանը: «Առավոտը» երեկ պարոն Նազարյանից հետաքրքրվեց՝ ինքն ինչո՞ւ է գալիս այդ հանդիպումներին: «Հասարակական կարգը պահպանելու»,- ասաց պարոն Նազարյանը: Հետաքրքրվեցինք՝ ավելի ցածր կոչումով ոստիկաններին չի՞ վստահում: «Ես եմ այստեղ, իմ տեղակալն է, երբ որ մասսան շատ է՝ 10 հազար մարդ անցնում է, ես պիտի գամ ու տեսնեմ, որ հասարակական կարգը պահպանվում է»,- ասաց պարոն Նազարյանը: Մասսան իսկապես շատ էր, քանի որ նախագահի հետ հանդիպման համար բերման էին ենթարկվել մարզի դպրոցների, մանկապարտեզների, այլ պետական հիմնարկների աշխատակիցները: Նաեւ տեղի ՀՀԿ-ականները «լավ աշխատանք» էին տարել բնակիչների շրջանում, քանի որ բոլորին էլ հանձնարարված էր մարդ բերել: Ամեն դեպքում, նախագահի հանդիպմանը 10 հազար մարդ հաստատ չկար, ինչպես ոստիկանապետն ասաց:



«Բոլոր միջոցառումներին եմ ես գնում: Անցած անգամ այցելել էինք դաշնակների միջոցառմանը, ՕԵԿ-ինը, ինչի ՀԱԿ-ի միտինգներին ես էնտեղ չե՞մ: Ես քաղաքի պետն եմ, բոլորի ոստիկանության պետն եմ»,- ասաց պարոն Նազարյանը: Փաստորեն, պարոն Նազարյանի ասածից ելնելով, անգամ ՀԱԿ-ի հանրահավաքներին մասսան գերազանցում է 10 հազարը: Մինչդեռ նկատենք, որ ՀԱԿ-ի հանրահավաքներին ոստիկանության ներկայացրած տվյալները չեն գերազանցում երեք հազարը: «Առավոտը» նաեւ հետաքրքրվեց՝ գո՞հ է Երեւանի ոստիկանապետը երեւանցիների կարգապահությունից: «Շատ: Նորմալ: Այս օրերն այնպիսի օրեր են, որ հուզմունքներ էլ են լինում, պոռթկումներ էլ, բայց ընդհանուր շատ նորմալ է: Ժողովուրդը հավաքվում է, ուրախանում են, ծրագրերն էլ են լսում. դա կարեւոր է, ընտրելուց առաջ շատ կարեւոր է»,- պատասխանեց պարոն Նազարյանը:

«Առավոտը» Երեւանի ոստիկանապետից նաեւ հետաքրքրվեց՝ ունի՞ որեւէ պատասխան ոստիկանությունն ուղղված այն մեղադրանքներին, որ հրապարակված ընտրացուցակներն ուռճացված են: Պարոն Նազարյանը չհամաձայնեց «ուռճացված» արտահայտության հետ, ասաց, որ «բացթողումներ» կան, որոնք շտկվում են շատ արագ. «Պետք է բոլորս էլ հասկանանք, որ այդ ամեն ինչը կատարվում է մեքենայացված, եւ այդ ընթացքում սխալներ կլինեն: Բայց ինչ սխալներ, բացթողումներ կան, ոստիկանությունը դիմել է քաղաքացիներին՝ ասեք, մենք կանենք շատ արագ: Նման բան չկա, որ դիմեն եւ արագ չուղղենք»:

ՀՀ առաջին նախագահն ու ՀԱԿ-ն արդեն քանի տարի է՝ խոսում են ընտրացուցակներում 500 հազար «ավելորդ ձայների» մասին: Դրանք մարդիկ են, ովքեր իրականում Հայաստանում չեն, սակայն ընդգրկված են ընտրացուցակներում: «Առավոտի» այս դիտարկմանը Ներսես Նազարյանը հակադարձեց. «Կարող է այն ժամանակ՝ 1991-ին, իրենց ժամանակ եղել է, բայց հիմա չկա: Ստուգվում է, թող սխալները ցույց տան, թող նման ցուցակներ ցույց տան՝ մենք կուղղենք: Նման բան լինել չի կարող»: Նկատեցինք, որ դա պարզելն այնքան էլ բարդ չէ. բոլորս էլ այստեղ ենք բնակվում, ծանոթ-բարեկամներ ունենք, որոնք մեկնել են արտագնա աշխատանքի կամ այլ երկրներ՝ բնակության, սակայն ընտրացուցակներում ընդգրկված են: Երեւանի ոստիկանապետը հավաստիացրեց, որ ընտրություններին նրանք վերադառնում են Հայաստան. «Ես ընկերներ ունեմ, ընտանիքներով, ինքնաթիռներով բոլորն էլ գալիս են ընտրություններին մասնակցելու: Մենք ենք կանչում ընկերներին, դիմում, որ եկեք, մասնակցեք: Մյուս կուսակցություններն էլ իրենց կոչն են անում: Հո մենակ չե՞ն գալիս որեւէ կուսակցության համար, գալիս են իրենց պարտքը տալու»: «Առավոտի» դիտարկմանը՝ երբ մարդը սոցիալական խնդիր ունի, գնացել է հացի փող աշխատելու, ընդամենը մեկ քվեարկության համար ինքնաթիռի տոմս է գնում ու գալի՞ս, Ներսես Նազարյանը պատասխանեց. «Իսկ ի՞նչ է պատահել: Այո, ընտրությունը բոլորինն է, եւ ամեն մեկն իր քաղաքացիական պարտքը պետք է կատարի»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՄՈՒՏՔԸ՝ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ

### Իշխանության իրավունքը



Ծաղկեց առաջին ծիրանենին, եւ գարնանային տաք շնչի մեջ անմիջապես էլ հստակորեն հասկանալի դարձավ, որ սերն առավել հին է, քան կյանքն ինքնին, եւ այդ է պատճառը թերեւս, որ կյանքը միշտ չէ, որ կարողանում է հարմար տեղավորվել սիրո մեջ ու ճնճվում է բարու եւ չարի, ունենալու եւ չունենալու արանքում՝ փորձելով գտնել երջանկությունը բաղձալի: Փնտրում է, փորձում եւ, հաճախ չգտնելով, ուզում է տեր դառնալ ուրիշի այգում բացված ծիրանի ծառին՝ իրեն վերագրելով այլոց բախտերը տնօրինելու իշխանություն, իշխանության իրավունքը:

Այնինչ սերը հուշում է, որ կարեւոր չէ, թե ում այգում է ծաղկել ծիրանի ծառը, կարեւորն այն է, որ այն կա, ծաղկել է, եւ դու տեսնում ես, զգում ճերմակ ծաղիկների բուրմունքը, եւ այդ պահից ծառն ավելի շատ քոնն է, քան տիրոջը, քանի որ տերը գիտեր, որ ծառ ունի, եւ այն մի օր կծաղկի, իսկ դու չգիտեիր: Եվ որովհետեւ չգիտեիր անակնկալը գարնանային, որը, որպես լուսավոր պարգեւ, ծփանք է տալիս քո էության մեջ, օգնում գտնել նպատակի ճանապարհը, օգնում կենտրոնանալ սեփական կամքի մեջ, որպեսզի այլեւս տեղ չմնա եթեներին, այլ տարածություն բացի դեպի ներաշխարհը քո, դեպի քո մտերիմները եւ դեպի հայրենիքը քո, որտեղ դու կանաչ տերեւի վրայով հոսող անձրեւի կաթիլ ես միայն: Եվ կրկին ու դարձյալ քեզ հորդորի, համոզի քեզ հաշտվել ինքդ քեզ հետ, ներդաշնակել քո ներսը եւ դուրսը, չփնտրել թշնամիներ հարազատների մեջ, չփորձել մենաշնորհել իշխանության իրավունքը, չէ՞ որ փափուկը միշտ էլ հաղթում է կարծրին: Չնայած որ հայի երկրորդ խելքը միշտ էլ ուշ է տեղ հասնում, կարելի է ասել, ուշացած, բայց հասնում է, համենայնդեպս...

Եվ այսօր մենք ապրում ենք հայի երկրորդ խելքի մեջ. մնում է ընդունել, ճանաչել, հասկանալ եւ մեր էության մեջ մենք մեզանից ավելին լինել՝ հանուն այն մեծ սիրո, որն առավել հին է, քան կյանքը ինքը: Չէ՞ որ ի վերջո ամեն ինչ անցնում է, անցնում է այս օրը, կանցնի վաղվա օրը նաեւ, եւ մեզ կմնա ցանկանալ, երազել դառնալ ընդամենը բարեհարդար տերեւ՝ դալարագեղ ծառի համար:

ՍԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

# ԲՀԿ-ի դեմ սեւ PR է իրականացվո՞ւմ

«Մեզ համար բացարձակապես անակնկալ չէր, որ քարոզարշավին զուգընթաց՝ կոնկրետ պատկանելության տակ գտնվող կայքերն ու որոշ թերթեր պետք է սկսեին իրենց խայտառակ ապատեղեկատվության շքերթը: Ասեմ, որ նման անհեթեթությունների պատվիրատուներն ու հլու կատարողներն ուղղակի անպտուղ գործով են զբաղված: Պարզապես դատապարտված են ջանքերն ու ռեսուրսները (այդ թվում՝ նաեւ ֆինանսական)՝ Գագիկ Ծառուկյանի թիկնապահների անունները Մարտի 1-ի հետ կապելու բոլոր հուսահատ փորձերը»,- իր կայքէջում գրել է ԲՀԿ համամասնական ցուցակի 20-րդ հորիզոնականը զբաղեցնող Տիգրան Ուրիխանյանը՝ անդրադառնալով կայքերից մեկի հրապարակմանը, որում խոսվում է ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի թիկնազորի եւ Մարտի 1-ի ինչ-ինչ առնչությունների մասին: Ուրիխանյանը նաեւ հիշեցնում է, որ «Հայկական ժամանակը» հրապարակեց տեղեկություն, ըստ որի՝ «Գագիկ Ծառուկյանը միակն է եղել հայտնի տեղում կազմակերպված հայտնի հավաքի մասնակիցներից, որ անընդունելի է համարել անգամ խոսակցությունը՝ ժողովրդի դեմ բռնություն գործադրելու, եւ կտրականապես դեմ է եղել նման խոսակցությանն անգամ»: Նա նաեւ փաստում է, որ իր բազմաթիվ հայտարարություններում Գագիկ Ծառուկյանն ասել է եւ շարունակում է պնդել. «Մարտի 1-ի մասով բոլոր հարցերի պատասխանները պետք է տրվեն, եւ անպատասխան հարցեր չպիտի մնան»: Ուստի Ուրիխանյանը խորհուրդ է տալիս «նման անհեթեթությունների հեղինակներին» իրենց «պադատչյոտնի» մամուլով «չտիրաժավորել ստահոդ լուրեր, որին անգամ իրենք չեն հավատում՝ ուր մնաց թե հանրությունը: Եվս մեկ խորհուրդ պատվերի հեղինակներին՝ մի փորձեք սեփական պատասխանատվությունը բարդել այլոց վրա»:

Հիշյալ հրապարակման հետ դրված է մի նկար, որում Ծառուկյանի հետ ինքը՝ Ուրիխանյանն է եւ Արսեն Մկրտչյանը, ով Ուրիխանյանի ղեկավարած Առաջադիմական կուսակցությունից էր ու նրա հետ անդամակցեց ԲՀԿ-ին: «Առավոտը» հետաքրքրվեց՝ ի՞նչ կապ ունեն ինքն ու իր նախկին կուսակիցը Մարտի 1-ի իրադարձությունների հետ: «Այնպես, ինչպես հիմար անհեթեթություններ են տարածում, նույնպես էլ համապատասխան պատկեր են ընտրում՝ հավանաբար փորձելով կիրթ եւ ինտելիգենտ մարդկանց, մեր թիմի առավել ցիվիլ ներկայացուցիչներին հասարակության գիտակցության մեջ ասոցացնել վառ երեւակայությունից ծնված պատկերավոր երեւույթներով»,- ասաց Ուրիխանյանը՝ հավելելով, որ եթե ԲՀԿ-ի եւ նրա առաջնորդի դեմ այդ «սեւ հնարքները» շարունակական բնույթ կրեն, ապա իր հայտարարության մեջ արված ակնարկները կդառնան «ուղիղ պատասխաններ՝ հստակ հասցեատերերին»:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Նման տվյալների ես չեմ տիրապետում»

«Նման տվյալների ես չեմ տիրապետում, չգիտեմ, թե որտեղից եք դուք նման տեղեկություններ ստացել»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց ՀՀԿ-ի կողմից թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրված Կորյուն Նահապետյանը՝ պատասխանելով հարցին, թե համայնքի դպրոցներում եւ մանկապարտեզներում ծնողների անձնագրային տվյալներն են «հավաքագրվում»՝ ՀՀԿ-ի եւ իր համար: «Մարդիկ են ահազանգում»՝ մեր հակադարձմանը պատասխանեց. «Նախընտրական քարոզարշավի ժամանակ տարբեր մարդիկ կարող են տարբեր տեղեկություններ հաղորդել, որոնք որեւէ ընդհանուր բաներ չունենան իրականության հետ: Չեմ կարող ես հաստատել կամ հերքել այն, ինչը որ մարդիկ ձեզ փոխանցել են: Չեմ կարող որեւէ մեկի գործողության հետ կապված մեկնաբանություններ անել, եթե դա ուղղակիորեն չի վերաբերում մեր նախընտրական շտաբի գործունեությանը»:

Առաքել Մովսիսյանը երեկ Արմավիրում ասաց, որ իրահանգ ունեն ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու: Կորյուն Նահապետյանից հետաքրքրվեցինք՝ իրենք ի՞նչ իրահանգ ունեն: «ՀՀԿ-ն եւ նրա առաջնորդ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարել է, որ մենք ամեն ինչ անելու ենք մեր երկրում լավ ընտրություններ անցկացնելու համար: Լավ ընտրություններ անցկացնելու համար, կարծում եմ, նախեւառաջ պետք է կամք ունենալ: Ըստ իս՝ այդ կամքը պետք է դրսեւորեն ոչ միայն իշխանությունները, այլ նաեւ բոլոր քաղաքական կուսակցությունները, ովքեր այս ընտրություններին մասնակցելու հայտ են ներկայացրել: Եվ նման միասնական մոտեցման պարագայում մենք իսկապես կունենանք Հայաստանում լավ ընտրություններ իրականացնելու հնարավորություն»,- ասաց մեր զրուցակիցը՝ վստահությամբ, որ այս ընտրություններում ՀՀԿ-ն հաղթելու է: Օրերս Սյունիքի մարզպետ, ՀՀԿ-ական Սուրիկ Խաչատրյանը հայտարարել է, որ Սյունիքում ՀՀԿ-ն 80 տոկոս ձայն է ստանալու: Կորյուն Նահապետյանից հետաքրքրվեցինք՝ իր կարծիքով՝ Մալաթիա-Սեբաստիա համայնքում որքա՞ն ձայն է ստանալու ՀՀԿ-ն: «Ես չեմ ուզում որեւէ թիվ հրապարակել, ժողովուրդն է իր ձայնը տալու այս կամ այն ուժին: Համենայնդեպս, մենք ցանկություն ունենք մեծ վստահությամբ հաղթել այս ընտրություններում: Կանխագուշակումներ չանենք, բայց որ ԱԺ-ում երկու ընտրակարգերով էլ ունենալու է ձայների մեծամասնություն, ես կասկած չունեմ»,- եղավ պատասխանը:

Ն. Գ.

Ա
a r a v o t d a i l y
ՈՒՐԲԱԹ 13.04.2012

# ՀԱԿ-ը որդեգրել է նոր կանոններ

## Լեւոն Տեր-Պետրոսյանը Աբովյանում հայտարարություն արեց միասնական շտաբի գործընկերների մասին




Արագածոտնի մարզից հետո երեկ ՀԱԿ-ը նախընտրական քարոզարշավը շարունակեց Կոտայքի մարզում՝ Եղվարդ, Չարենցավան, Աբովյան, Հրազդան քաղաքներում: Աբովյանում ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը մի կարեւոր հայտարարություն արեց՝ ընթերցեց այն կանոնները, որը սահմանվել է Կոնգրեսի համար. «1) Ակտիվորեն մասնակցել ընտրությունների վերահսկողությանն ու օրինականության ապահովմանն ուղղված բոլոր անկեղծ նախաձեռնություններին: Կան նաեւ թատերական նախաձեռնություններ, որոնք արվել են Նիկոյանի, Դավիթ Հարությունյանի կողմից: Անկեղծ նախաձեռնություն ասելով՝ նկատի ունեմ ՀՅԴ-ի, «Ժառանգության», ԲՀԿ-ի եւ Կոնգրեսի կողմից ձեւավորված միասնական շտաբի գործունեությունը: 2) Քննադատության հիմնական թիրախ դարձնել սարգսյանական վարչախմբի 2 գլխավոր հենասյուները՝ ՀՀԿ-ն եւ իր կույրաղիքը դարձած ՕԵԿ-ը: 3) Հակաքարոզչությամբ չզբաղվել, առավել եւս՝ անձնական բնույթի որակումներով հանդես չգալ հատկապես միասնական շտաբում գործընկերներ հանդիսացող ՀՅԴ-ի, «Ժառանգության» եւ ԲՀԿ-ի ու նրանց թեկնածուների դեմ: 4) Միեւնույն ընտրատարածքներում Կոնգրեսը եւ այս կուսակցությունների թեկնածուները ներկայացված լինելու պարագայում առաջնորդվել բացառապես փոխադարձ հարգանքի, ազնիվ մրցակցության, համագործակցության սկզբունքներով: 5) Անկախ այն բանից, թե մեր գործընկերները կհարգեն, թե կխախտեն այս կանոնները, Կոնգրեսը հաստատակամ է որեւէ պարագայում չշեղվել դրանցից»:

Աբովյանում Լեւոն Տեր-Պետրոսյանին ողջունեցին «Լե-վոն, Լե-վոն» վանկարկումներով: Նա իր ելույթում նշեց, որ «ասում են՝ իբրեւ թե մեր երկրի աղքատների թիվը 35% է: Դա սուտ է, 90%-ն է աղքատ, աղքատ էլ չեն՝ չքավոր, թշվառ: Այս երկրում քիչ թե շատ բարեկեցիկ կյանքով ապրում է 10%-ը, իսկ 7-8%-ը ճոխության մեջ է, Մոնտե Կառլոներում, Բադեն-Բադեններում, կազինոներում: Ովքեր ձեզ 5000-10 հազար դրամ են առաջարկում, էդ մարդիկ պիտի հանեն ձայնի գինը, պիտի 10 հազար դոլար պահանջեն: Սա գիտնականների ուսումնասիրությունների արդյունք է: Տարեկան 5 միլիարդ դոլար մտնում է պետական պաշտոնյաների գրպանը: Բոլոր թվերը, որոնք պաշտոնական վիճակագրությունը հայտարարում է, բացարձակ սուտ են, մի օր բացահայտվելու են»: Ըստ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ սուտ են արտագաղթի, ՀՀ բնակչության թվերը, իրականում Հայաստանի բնակչությունը ոչ թե 3 մլն 300 հազար է, այլ 2 մլն 400 հազար: Իսկ ընտրողների իրական թիվը 1 մլն 700 հազար է՝ մնացածը մահացել կամ գնացել են, այստեղ չեն. «Այնպես որ՝ հավատալ այս իշխանություններին, որ ինչ-որ բան են փոխելու... ես գիտեմ՝ ինչ են փոխելու. ավելի շատ են գողանալու»:

ՀՀՇ վարչության նախագահ Արամ Մանուկյանը կոչ արեց ընտրակաշառքներից հրաժարվել. «Արտագաղթ չէ սա, արտահանում է, մարդկանց հանում է այս իշխանությունը, եւ եթե ձեր հարեւանը մուրաբա է վերցնում, կաշառք է վերցնում, հեռախոս է վերցնում, ուրեմն արտագաղթ կազմակերպող է: Ձեր չորս կողմը նայեք՝ ջահել չկա: Տեր կանգնենք մեր երկրին: Կարանք կզենք մինչեւ վերջ, ու Սերժը մնա, մի հատ նրա առաջինը 4-5 միլիարդ հավաքեց, մի հատ էլ սա հավաքի, էդ մի գործում լավ են, հրաշք են, իրենք իրենց գրպանի ղադրը գիտեն: Մենք պայքարող ենք, քցող չենք, ազատամարտիկներ ենք, կռված տղերք են այստեղ կանգնածները: Բոլոր ուտողները գալու, ուտելու, գնալու են, մենք ու դուք ենք մնալու»:

Նախկին քաղբանտարկյալ Սասուն Միքայելյանը բացատրեց, թե ինչու էին եղել ցուրտ ու մութ տարիները՝ «Ցուրտ ու մութ տարիներից են խոսում՝ լույս չկար: Ո՞ր մի պատերազմող երկիրն է խորոված-խաշլամայով պատերազմ տարել, հաղթել: Կա՞ ընտեղ երկիր: Ես խնդրում եմ ձեզ պատնեշ կանգնել, էլ հետադարձ ճամփա չկա, գլորվում ենք դեպի անդունդ, 18 թիվը կտենանք, ումի՞ց եք վախենում, ո՞վ են սրանք»:

Նախկին զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանը խոսեց արդարադատության բացակայությունից՝ նշելով, որ հայ մարդը պաշտպանված չէ վարչական մարմնի ապօրինություններից թե՛ դատարաններում եւ թե՛ իրավապահ մարմիններում. «Ոչ ոք չի կարող ասել, որ առանց միջնորդի եւ այլեւայլ միջնորդությունների իր հայցը դատարանում բավարարվել է»:

Նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը վստահեցնում էր, որ եթե ընտրվի Սերժ Սարգսյանը՝ մենք կմնանք աղքատ, որովհետեւ եթե հարստանանք, կասենք՝ ո՞վ է մեր երկրի ղեկավարը, ո՞վ է վարչապետը, այս մարդը ուղեղ, կրթություն ունի՞. «Դուք սկսելու եք պահանջ դնել, իսկ եթե պահանջ չդնեք՝ դուք պիտի աղքատ լինեք: Պիտի գաք էդ 10 հազար դրամին նայեք: Մենք ուրիշ ենք, մենք փող չենք առաջարկում: Դուք չեք կարող լավ ապրել իրենց օրոք, եթե լավ ապրեք, դուք կդառնաք անհնազանդ, անկախ քաղաքացի: Եթե մենք գողացած լինեինք, ես այսօր չէի գա ձեր առաջ, մի լավ տեղ նստած էի հիմա: Մենք մինչեւ վերջ կանգնելու ենք, մեր հետ կանգնեք՝ վերջ տանք սրանց, սրանք եկել են՝ երկիրը գրավելու»:

ՀԱԿ-ի անդամները ընդգծեցին, որ կարեւորը՝ իրենք զոռով չեն բերել հանրահավաքի, ովքեր եկել են՝ եկել են իրենց կամքով ու սրտով:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵՋԵԲՅԱՆ

### ՕԵԿ-ը հայտարարում է

«Օրինաց երկիր» կուսակցությունը պաշտոնապես հայտարարում է, որ երբեք ընտրակաշառքներ չի բաժանել եւ չի բաժանելու, ավելին, անընդունելի է համարում ընտրակաշառքով ստացած յուրաքանչյուր քվե: Ինչ վերաբերում է զանգվածաբար ջեմեր կամ օծանելիք բաժանելուն, ապա դա կեղծիք է եւ ապատեղեկատվություն: Ճշմարտությունը շատ պարզ է՝ ինչպես վերջին 15 տարում, այնպես էլ այս տարի մարտի 8-ի կանանց տոնի կապակցությամբ ՕԵԿ առանձին կուսակցական կառույցները, ելնելով իրենց հնարավորություններից, շնորհավորել են առանձին կուսակցական կանանց, նվիրել թե ծաղիկներ, թե այլ փոքրիկ նվերներ:

Տեղի ունեցածը ընտրակաշառք դիտարկելու որոշների փորձերը համարում ենք անընդունելի, քանի որ իրազեկ յուրաքանչյուր քաղաքացի գիտի, որ «Օրինաց երկիրը» երբեք ընտրակաշառք չի բաժանել եւ չի բաժանելու: Ինչ վերաբերում է ՕԵԿ հանրահավաքից հետո բաժանված պոստերները պատռելու կամ դեն նետելու խնդրին, որին անդրադարձել է նաեւ aravot.am-ը՝ տեղեկացնենք, որ տասնյակ հազարավոր մասնակիցների բաժանվել են պոստերներ, եւ դրանք հետ հավաքելու համար դրված են եղել արկղեր՝ բայց ոչ երբեք աղբարկղեր: Իսկ այն, որ հանրահավաքի տասնյակ հազարավոր մասնակիցներից մի քանիսը պատռել են դրանք կամ այլոց կողմից պատռվել եւ նետվել է աղբարկղ, դա արդեն խոսում է այդ մարդկանց բարոյական նկարագրի մասին: Այդուհանդերձ կատարվածը քննարկվել է կուսակցության շտաբում, եւ քարոզարշավի առաջիկա հանրահավաքների ընթացքում կշտկվեն կազմակերպչական բոլոր այն թերացումները, որոնք եղել են:

ՕԵԿ մամուլի ծառայություն

# Հրազդանցիները որեւէ կուսակցության, քաղաքական ուժի չեն հավատում



«Ժառանգությունը» սկսում է իր քարոզարշավը Հրազդանից, որտեղ հավաքվել են սրտացավ քաղաքացիներ, ովքեր գիտեն, որ Երեւանը, Հրազդանը այսպես շարունակել չեն կարող, որ պետք է մեր քաղաքում, մեր կյանքում փոփոխություն մտցնել այսօրվանից սկսյալ: Հրազդանը պիտի հավատա իրեն, չսպասի փրկիչների, խոստում շռայլողների, աթոռ տենչացողների եւ ողորմություն բաժանողների: Աշխատանքը, առողջությունը, կրթությունը ձեր իրավունքն են, եւ թող ոչ մեկը էլի 20 տարի մեր անկախությունից այս կողմ չփորձի մեզ խաբել իր թղթադրամներով, բաժանվող պարարտանյութերով, ցուցակագրումներով, որը տեղի է ունենում այստեղ եւ ամեն տեղ: Եվ եթե որեւէ մեկը հիմա սպասում է ազատ ու արդար ընտրությունների՝ հենց այս պահին, Հրազդանից մինչեւ Երեւան, հյուսիսից մինչեւ հարավ, պետք է կանգնեցնի այդ ցուցակագրումները, այդ կեղծ ողորմություն բաժանելը, որով ուզում են մեր քաղաքացուն ստորաքարշ դարձնել»,- Հրազդանում քաղաքի բնակիչների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց «Ժառանգություն» կուսակցության եւ համամասնական ցուցակի առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը: Նա հիշեցրեց հրազդանցիներին, որ հիմա իրենց՝ քաղաքացիներին մուրացկանի տեղ դրած ու նրանց ողորմություն բաժանողները ընտրություններից հետո ավելի շատ միջոցներ են վերցնելու սեփական գրպանի եւ նպատակների համար ծառայեցնելու նպատակով:

Րաֆֆի Հովհաննիսյանն ասաց, թե չի եկել հրազդանցիներին համոզելու կամ հայցելու, որ ընտրեն «Ժառանգությանը». «Մեր ծրագիրը ձեր առջեւ է, մեր պատգամավորների հետագիծը, մեր ցուցակի թեկնածուների կենսագրությունը համեմատեք, լսեք բոլորին, չվախենաք, հարց տվեք, ձեզ հաշվետու պահեք եւ հետո դուք ընտրեք: Մենք գալիս ենք ոչ թե գովազդների կամ տեսահոլովակների համար, այլ որ մեր երկրում հայ մարդը, հայաստանցին, հրազդանցին ասի՝ հերիք է, սա ոչ Օսմանյան կայսրություն է, ոչ Խորհրդային Միություն: Իր լավով ու վատով հանդերձ՝ սա Հայաստանի Հանրապետությունն է, եւ թող ոչ մեկը մեզ իրավազուրկ չանի մեր սեփական հողում»:

Ելույթ ունեցավ նաեւ «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանն ու ասաց, թե անցած հինգ տարիների ընթացքում խմբակցության պատգամավորները եղել են ժողովրդի կողքին, որ այսօր «Ժառանգության» նպատակն է կառուցել այնպիսի պետություն, այն հայրենիքը, որտեղից ոչ թե մարդիկ հեռանալու են, այլ ուր պիտի վերադառնան:

Կուսակցության քարոզարշավային այս հանդիպումը մարդաշատներից չէր, բայց դա, որքան հասկացանք, պայմանավորված էր ոչ թե կոնկրետ «Ժառանգության» նկատմամբ վերաբերմունքով, այլ անտարբերությամբ եւ քաղաքական պրոցեսների նկատմամբ հիասթափությամբ ու անվստահությամբ: Aravot.am-ի հետ զրույցում քաղաքի փողոցում խմբված հրազդանցիներից մեկը մեր հարցին, թե՝ ինչո՞ւ են հավաքվել՝ գիտեի՞ն, որ հանդիպում է լինելու, թե՞ միշտ է փողոցում այսքան մարդ հավաքվում, ասաց. «Չէ, ես բեզդելնիկներն են, օրական էլ սենց ա, քուր ջան: Գալիս են, կանգնում են, մի քիչ զրույց են անում ստեղից-ընդեղից, աշխարհի դրությունից»,- ասաց մեր զրուցակիցը: Հրազդանցիներից մեկն էլ նկատի ունենալով Րաֆֆի Հովհաննիսյանին՝ առաջարկեց. «Մարդ ա, եկել ա, թող մի հատ շուկա, խանութ մտնի, գները նայի, ես ժողովուրդը սոված կոտորվում ա, կեսը հիվանդ, թող մի հատ օգնություն ցույց տա»:

Հրազդանցիների հետ մեր զրույցի ամփոփումն այն էր, որ նրանք որեւէ կուսակցության, քաղաքական ուժի չեն հավատում, որովհետեւ, նրանց ասելով, բոլորի ծրագրերն էլ նույնն են, նույնն են նաեւ խոստումները, որոնք երբեք իրականություն չեն դառնում: Հրազդանցիները կամ գոնե այն մարդիկ, ում հետ մենք զրուցեցինք, ցածրաձայն հարցնում էին՝ իրանք փող-բան բաժանելո՞ւ են, կամ անհասցե ակնկալում էին, որ հրազդանցիների համար «աշխատատեղ բացեն, շինարարություն անեն»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# ՀԱԿ-ը տենչում է հանցավոր ռեժիմից ազատվել

## Իսկ ՀՀԿ-ն էլ իր նախընտրական ծրագրով ցույց է տալիս, որ առաջիկա 5 տարիների համար էլ հեռահար նպատակներ ունի:

Ամեն անգամ նախընտրական շրջանում քաղաքական կուսակցություններն ամեն կերպ փորձում են ցույց տալ ու համոզել, որ հենց իրենք են այն քաղաքական ուժը, որը ժողովրդի մատից փուշ կհանի: Նրանցից ամեն մեկն իր ներկայացրած նախընտրական ծրագրում վստահեցնում է, որ հենց ինքը կարող է Հայաստանը զարգացնել ու ծաղկեցնել:

Հայաստանի հանրապետական կուսակցությունը, որպեսզի իր խոստումներում ավելի համոզիչ երեւա, ձեռքի հետ էլ նախընտրական ծրագրում ներկայացրել է այս տարիների ընթացքում կատարած աշխատանքները:

Աժ ընտրություններից հետո ՀՀԿ-ն իշխանությունում մեծամասնություն կազմելուց հետո որոշել է առաջին հերթին մեր երկրի գյուղերը շենացնել ու դարձնել հարմարավետ. «Մենք պարտավոր ենք, բարձրացնելով գյուղատնտեսության արդյունավետությունը, գյուղում զուգահեռաբար ստեղծել կյանքի համար հարմարավետ պայմաններ: Չի կարող լինել զարգացող գյուղատնտեսություն՝ առանց հարմարավետ գյուղի»:

Իսկ Հայ ազգային կոնգրեսը այս նույն ոլորտը զարգացնելու համար առաջարկում է՝ «Հրաժարվել արտադրողներին ու մատակարարներին սուբսիդավորելու քաղաքականությունից, ինչպես ներկայումս դա արվում է սերմացուի, դիզելային վառելիքի, պարարտանյութի եւ այլնի պարագայում: Պետությունը փողը պետք է տա գյուղացուն, նա էլ կորոշի՝ ումից ինչ գնի»:



Գյուղատնտեսության զարգացման համար ՀԱԿ-ը գտնում է նաեւ, որ պետք է քաղաքներում գյուղացիական տնտեսությունների կողմից հիմնված շուկաները վերականգնվեն ու էլի մի քանի նոր շուկաներ բացվեն. «Շաբաթ-կիրակի բոլոր քաղաքների բոլոր բակերում գյուղմթերքներ վաճառելու գյուղացիների իրավունքը պետք է պարտադիր կերպով կատարվի բոլոր քաղաքապետերի կողմից: Որեւէ հարկ, որեւէ վճարում, տեղեկանք, կտրոն կամ ՀԴՄ գյուղացին չպետք է տա»:

Իսկ հանրապետականները գյուղմթերքների գների սեզոնային տատանումները մեղմելու համար առնվազն 3 անգամ ավելացնելու են ջերմոցային տնտեսությունների տարածքները, ինչի արդյունքում, ՀՀԿ-ն համոզված է, շուրջ 30 հազար նոր աշխատատեղ կստեղծվի:

Գյուղացու սիրտը շահելու համար ՀԱԿ-ը իշխանության գալու դեպքում որոշել է հարյուրավոր գյուղացիների վարկային տոկոսները սառեցնել. «Ներառյալ 01.04.2012 բոլոր վարկերի (74 մլրդ դրամ) տոկոսադրույքները սառեցվում են, գյուղացիները մարում են մայր գումարը առանց տոկոսի: Տոկոսադրույքների մարումը կիսով չափ իր վրա է վերցնում ՀՀ կառավարությունը, իսկ մյուս կեսը դուրս է գրվում ի հաշիվ գյուղատնտեսական վարկերի նկատմամբ կիրառվող ցածրացված տնտեսական նորմատիվների»: ՀԱԿ-ը մեկ այլ ուշագրավ դրույթ էլ է ներկայացնում իր ծրագրում: Ըստ նրա՝ Հայաստանով մեկ պետք է բացվեն տասնյակ դպրոցներ, որտեղ գյուղացիները պետության հաշվին կստանան հիմնական գյուղատնտեսական ու տնտեսագիտական գիտելիքներ:

Ժողովրդի առողջության համար մտահոգված են թե՛ ՀԱԿ-ը, թե՛ ՀՀԿ-ն: Այս կուսակցություններն իրենց ծրագրում խոստանում են առողջացնել ազգը, կանխարգելել հիվանդությունները առողջ ապրելակերպ ներդնելու միջոցով:

ՀՀԿ-ն ամեն ինչ անելու է, որ հայ ազգը զանգվածաբար զբաղվի սպորտով: Առողջ ապրելակերպի ներդրման համար հանրապետականները մշտապես իրենց ուշադրության տակ են պահելու ծխելու դեմ պայքարի հարցերը եւ երաշխավորելու են առողջ եւ անվտանգ սնունդ:

Առողջապահության ոլորտում պարտադիր բժշկական ապահովագրության մեթոդով ՀԱԿ-ն էլ առաջարկում է՝ «Հարուստը վճարում է աղքատի, առողջը՝ հիվանդի, աշխատողը՝ գործազուրկի եւ երիտասարդը՝ տարեցի համար: Պետության կողմից ոչ թե բուժհիմնարկների, այլ քաղաքացիների ֆինանսավորում»:

Ինչ վերաբերում է բնապահպանական խնդիրների՝ կուսակցությունների նախընտրական ծրագրերի իրականացմանը, ապա ՀՀԿ-ն ընդլայնելու է բնության հատուկ պահպանվող տարածքները, ուժեղացնելու է շրջակա միջավայրի պետական վերահսկողությունը, կեղտաջրերի կենսաբանական մաքրման նոր կայաններ է ստեղծելու, հներն էլ՝ հիմնանորոգելու. «Շարունակելու ենք Սեւանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը եւ պահպանությունը»: Իսկ ՀԱԿ-ը համոզված է, որ բնությունը կփրկվի եւ կառողջանա, իրենց իսկ ձեւակերպմամբ՝ «ներկայիս հանցավոր ռեժիմից օր առաջ ձերբազատվելով»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

### Դավիթաշենում խցափակվում էին կաթսայատների ջրագծերը

Ինչպես տեղեկացրեց «Երեւան Ջուր» ՓԲԸ «Արեւմուտք» շահագործման տնօրինության «Մաշտոց» տեղամասի գլխավոր ճարտարագետ Էդգար Հայրապետյանը, ապրիլի 12-ին, ժամը 10.00-24.00-ը, Դավիթաշենի 1-ին բնակելի զանգվածի եւ հարակից տարածքների ջրամատակարարման դադարեցումը պայմանավորված էր շինարարական աշխատանքներով: Նշված բնակելի զանգվածում առկա 4 սեփականաշնորհված կաթսայատները չէին գործում, պաշտոնապես ջուր չէին ստանում, սակայն նախկինից մնացած ունեին ջրագծեր, որոնք ջրի կորստի պատճառ էին հանդիսանում: Տեղամասի մասնագետների արդյունավետ աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ կաթսայատների ջրագծերը խցափակել մի քանի ժամում եւ վերսկսել սպառողների ջրամատակարարումը մինչեւ հայտարարված ժամկետի ավարտը:

### Ջրատարի վթարները վերացվեցին

Նույն օրը՝ ապրիլի 12-ին, ժամը 10.00-22.00-ը, դադարեցվել էր Շենգավիթ վարչական շրջանի Վերին Շենգավիթ 2-րդ, Գ. Նժդեհի, Արշակունյաց, Ս. Զորավար, Սեւանի, Մայիսի 9-ի, Ֆրունզե, Ս. Սարգսյան, Մանանդյան, Չեխով, Մանթաշյան, Եղբայրության, Նիզամի, Կոտովսկու, Պողովի, Մադոյան փողոցների եւ հարակից տարածքների ջրամատակարարումը: Խնդիրը «Մսի կոմբինատ» օրվա կարգավորիչ ջրամբարի (ՕԿՋ) ելքի 800մմ տրամագծով խողովակաշարի երկու վթարված հատվածներն էին, որը ջրի կորստի էր հանգեցնում: Ցանկանալով նվազագույնի հասցնել սպառողներին պատճառվող անհանգստությունը՝ վթարները վերացնում էին միաժամանակ «Արեւելք» շահագործման տնօրինության «Շենգավիթ» (գլխավոր ճարտարագետ՝ Հենրիկ Մարտիրոսյան) եւ «Էրեբունի» (գլխավոր ճարտարագետ՝ Արայիկ Եղիկյան) տեղամասերի մասնագետները: Նույն օրը երեկոյան վթարներից մեկի հետեւանքները վերացվել էին, եւ ջրատարը վերագործարկվել էր: Ընկերության աշխատակիցները փորձում էին նորոգել խողովակաշարի երկրորդ վթարված հատվածը՝ առանց վերջինիս նոր կանգառի:

### «Երեւան Ջուր»-ը տեղեկացնում է

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վթարի վերացման աշխատանքների հետ կապված, ս.թ ապրիլի 13-ին, ժամը 08.00-ից մինչեւ ապրիլի 14-ը, ժամը 20.00-ը կդադարեցվի Նոր Նորք վարչական շրջանի 5-րդ եւ 8-րդ զանգվածների, Վիլնյուսի նրբանցքի 35, 36, 43, 44, 45, 46, 46Ա շենքերի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը: Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

# Քաղաքապետից ավտոբուս են խնդրում

Թիվ 13 երթուղին, որը սպասարկում է Ներքին Շենգավիթից Դավիթաշեն ընկած ճանապարհահատվածը, մշտապես երթեւեկում է գերբեռնված: Օրերս այսպիսի բողոքով «Առավոտի» խմբագրություն են դիմել Շենգավիթ համայնքի բնակիչները: Նրանց խոսքերով՝ այդ երթուղին հատկապես անհարմարություններ է առաջացնում Իսակովի պողոտայի վրա գտնվող մի շարք հիմնարկ- ձեռնարկությունների աշխատակիցների եւ Կիլիկիայի ավտոկայան գնացող քաղաքացիների համար: Այս ուղեգծից օգտվող քաղաքացիները, դիմելով Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին, խնդրում են. «Պարոն քաղաքապետ, ցանկալի է, որ այս երթուղով աշխատեն նաեւ ավտոբուսներ, հատկապես հաշվի առնելով նրա երթուղագծին գտնվող ավտոկայանի փաստը: Մարդիկ, որոնք գտնվում են սոցիալապես անապահով վիճակում, ավտոկայան ստիպված են լինում գնալ ոչ թե տաքսիով, այլ հասարակական տրանսպորտով, ուստի խնդրում ենք այդ փաստը հաշվի առնեք եւ տնտեսվարողի առաջ հարց դնեք, որպեսզի գիծը շահագործի նաեւ ավտոբուսներով, կամ մեկ այլ երթուղագիծ այդ ուղղությամբ բացել, որը բաղկացած կլինի ավտոբուսներից»:

Նշենք, որ արդեն մշակվել է Երեւան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղեւորափոխադրումների երթուղային ցանցը: Այն հրապարակված է Երեւանի քաղաքապետարանի կայքէջում՝ www.yerevan.am: Համաձայն երթուղային նոր ցանցի՝ թիվ 13 երթուղու ուղեգծում փոփոխություններ են տեղի ունեցել: Այն այսուհետեւ կերթեւեկի Ներքին Շենգավիթ-Թադեւոսյան փողոցով, Բագրատունյաց-Ծովակալ Իսակովի պողոտայով, «Հաղթանակ» կամրջով ու Մաշտոցի պողոտայով, Մարշալ Բաղրամյան փողոցով, Կիեւյան-Հալաբյան-Իոսիֆյան-Տ. Պետրոսյան-Աղաբաբյան փողոցներով մինչեւ Դավիթաշենի 1-ին թաղամաս: Այս երթուղու հետադարձը նույն ուղեգծով է: Շարժակազմի թվաքանակը երթուղում կլինի 20 մեքենա: Ինչպես վստահեցնում են մայրաքաղաքի տրանսպորտի համար պատասխանատուները, այս երթուղուց օգտվող քաղաքացիները թիվ 13-ին կսպասեն 5 րոպե: Այսինքն՝ գիծը շահագործողը պարտավոր է 5 րոպեն մեկ քաղաքացիներին սպասարկել: Ինչ վերաբերում է գծում ավտոբուս լինելուն, ապա քաղաքապետարանից մեր հարցին ի պատասխան՝ հայտնեցին, որ եթե արդեն որոշված է, որ երթուղագծում միկրոավտոբուսներ լինեն, գիծը սպասարկվելու է դրանցով, եթե փոխվի, ապա ավտոբուսների ամբողջ շարժակազմն է փոխվելու:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

# Ապրիլի 27-29-ը Ծաղկաձորում կկայանա gt hackathon Armenia 2012-ը

«ՎիվաՍել-ՄՏՍ-ը» տեղեկացնում է, որ ապրիլի 27-29-ը Ծաղկաձորում կկայանա gt hackathon Armenia 2012-ը: Հաքաթոնի նպատակն է ստեղծել ծրագրեր, որոնք աշխատում են Android օպերացիոն համակարգի վրա եւ հավելումներ (extensions/apps) Google Chrome բրաուզերի համար, ինչպես նաեւ մեծացնել հետաքրքրությունը մոբիլ եւ ցանցային տեխնոլոգիական լուծումների հանդեպ: gt hackathon Armenia 2012-ի կազմակերպիչներն են Google Technology User Group Armenia-ն եւ Սոցիալական մեդիայի հայկական ասոցիացիան (Armenian Social Media Association): Հաքաթոնի գլխավոր հովանավորն է «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը:

«Մեդիամաքս մեդիա» ընկերությունը հանդես է գալիս որպես gt hackathon Armenia 2012-ի պաշտոնական գործընկեր: Հաքաթոնին գրանցվելու եւ մանրամասն տեղեկատվություն ստանալու համար պետք է այցելել միջոցառման պաշտոնական կայքը՝ http://gt.hackathon.am: Գրանցումը տեւելու է մինչեւ ապրիլի 18-ը: Այնուհետեւ միջոցառման կազմակերպիչների կողմից կդիտարկվեն բոլոր գրանցված նախագծերը եւ կընտրվեն լավագույնները, որոնք հնարավորություն կունենան մասնակցելու ապրիլի 27-29-ը Ծաղկաձորում կայանալիք երկօրյա հաքաթոնին:

Ընտրված մասնակիցներն ապրիլի 20-ին կհրավիրվեն նախնական հանդիպման: Ընտրված մասնակիցները կկարողանան աշխատել իրենց նախագծերի վրա մինչեւ ապրիլի 27-ը: Ապրիլի 27-ի երեկոյան թիմերը կուղեւորվեն Ծաղկաձոր, որտեղ պետք է հաքաթոնի երկու օրերի ընթացքում շարունակեն աշխատել իրենց նախագծերի վրա, իսկ հաքաթոնի երկրորդ օրվա վերջում պետք է ներկայացնեն իրենց ծրագրերը՝ հնարավորինս պատրաստ վիճակում: Հաքաթոնի ընթացքում մասնակիցները կարող են ստեղծել իրենց ծրագրերը ինչպես 0-ական վիճակից, այնպես էլ շարունակելով նախկինում ստեղծված ծրագրերը, եթե դրանք դեռեւս չեն հրապարակվել ինտերնետային ոչ մի աղբյուրում: Ծրագրերը պետք է օգտակար կամ հետաքրքիր լինեն հայ օգտվողների համար: Եթե ծրագիրը ստեղծված է միջազգային շուկայի համար, այն պետք է հետաքրքիր լինի նաեւ հայ օգտագործողներին, որպեսզի թույլատրվի նրա մասնակցությունը մրցույթին: Նախապատվությունը կտրվի այն ծրագրերին, որոնք կաշխատեն բջջային օպերատորների կամ էլեկտրոնային վճարման համակարգերի հետ:

Միջոցառման ավարտից հետո մասնակիցների կողմից կկատարվի ստեղծված ծրագրի նախնական վիճակի 5 րոպեանոց դեմո-ցուցադրություն, որից հետո ժյուրիի անդամները կորոշեն երկու հաղթողներին՝ «Լավագույն ծրագրային լուծում Android ՕՀ-ով սարքերի համար» (մրցանակը՝ Galaxy Nexus սմարթֆոն) եւ «Լավագույն ծրագրային լուծում Chrome դիտարկիչի համար» (մրցանակը՝ HTC Flyer պլանշետային համակարգիչ) անվանակարգերում:

Առավոտ aravot daily
ՈՒՐԲԱԹ 13.04.2012

# «Շեստոյի Մուրադը» հետախուզվողի «տանիքն» էր

Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Մկրտչյանի նախագահությամբ երեկ սկսվեց Տիգրան Հակոբյանի եւ Մուրադ Բաղդասարյանի նկատմամբ հարուցված քրեական գործի դատաքննությունը:

Դատարանը ճշտեց ամբաստանյալների ինքնությունը:

Տիգրան Հակոբյանը որեւէ տեղ չի աշխատել, ըստ նրա պաշտպանի, անցյալ տարվա դեկտեմբերին արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ինսուլտ է տարել, ունի շաքար, տառապում է «հեպատիտ C» եւ մի շարք հիվանդություններով: Նա գտնվում է մեկուսարանի բուժմասում՝ բժիշկների հսկողության տակ: Վիճակը միջին ծանրության էր:

Նրա պաշտպանը՝ հանրային գրասենյակի պաշտպան Գարիկ Մալխասյանն ասաց, որ ամբաստանյալի 82-ամյա մայրը մահամերձ վիճակում է, նրա խնամքին է 84-ամյա հայրը, չունի բնակարան, իսկ քույրն էլ ցանկություն էր հայտնել եղբորն ապահովել կացարանով՝ իր բնակարանով:

Մյուս ամբաստանյալը՝ Մուրադ Բաղդասարյանն աշխատել է ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում՝ հատկապես կարեւոր գործերի ավագ օպերլիազոր: Փոխգնդապետն ուներ մեկ երեխա:

Նրա պաշտպանությունն էլ իրականացնում էր ՀՀ փաստաբանների պալատի անդամ Սամվել Կոստանյանը:



Այս գործով տուժողները չորսն էին՝ Անահիտ Խաչատրյանը, Գեւորգի Պետրոսյանը, Սեդա Պողոսյանն ու Լեւոն Եգանյանը:

Մինչ դատաքննությունը կհայտարարվեր սկսված՝ պաշտպանները հանդես եկան միջնորդություններով. նրանք դատարանին խնդրում էին իրենց պաշտպանյալների նկատմամբ կալանքը փոխել եւ կիրառել գրավ:

Տիգրան Հակոբյանի դեպքում ընդվզեց տուժող Անահիտ Խաչատրյանը, որը ասաց, թե բաց թողնելու դեպքում, Հակոբյանը կկորչի եւ իրենց վնասն էլ չի հատուցվի, ապա զարմացավ, թե ինսուլտ տարած մարդն ինչպես է, որ առանց պատգարակի հայտնվել է դատարանում:

Երկուսի դեպքում էլ առարկեց մեղադրող Աշոտ Նադոյանը՝ անհիմն համարելով այդ միջնորդությունները: Ի դեպ, երբ պաշտպանն ասում էր, թե Տիգրան Հակոբյանը պատշաճ վարքագիծ է դրսեւորել եւ չի բացակայի դատաքննությունից, պարզվեց, որ նույն Տիգրանը երկու տարի գտնվել է հետախուզման մեջ եւ զբաղվել մի քանի անձանց «քցելով»:

Դատարանը խորհրդակցական սենյակից դուրս գալով՝ մերժեց պաշտպանների միջնորդությունները:

Մեղադրող Ա. Նադոյանը հրապարակեց մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը:

Ըստ մեղադրանքի, Տիգրան Հակոբյանը մեղադրվում է այն բանի համար, որ չունենալով մշտական աշխատանքի վայր, բնակության վայր, խաբեությամբ եւ վստահությունը չարաշահելու եղանակով, ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, մոլորության մեջ է գցել նկարների կոլեկցիոներ Գեորգի Պետրոսյանին, իր ծանոթ Լեւոն Եգանյանին, հարեւան Սեդա Պողոսյանին, Անահիտ Խաչատրյանին, նրանցից հափշտակել է խոշոր չափի գումարներ: Միայն Գեորգի Պետրոսյանից ստացել է քսաներեք հազար դոլար գումար, այն պատրվակով, թե ձեռք կբերի ճանաչված հայ եւ ռուս նկարիչների՝ Սարյանի, Բաշինջաղյանի**D** գործերից: Սակայն այդպես էլ նկարները չեն տրվել Գեորգի Պետրոսյանին: Փոխարենը եվրոպական նկարիչների էժանագին նկարներն է փորձել «սաղացնել» Պետրոսյանի վրա: Գ. Պետրոսյանը պահանջել է իր գումարը:

Տուժողներից էր ոսկերչությամբ զբաղվող Լ. Եգանյանը: Տասը հազար ԱՄՆ դոլար գումար էլ նա հափշտակել էր Եգանյանից: Պիտի ոսկյա զարդերը «տարվեր» Թուրքիա եւ, ըստ Հակոբյանի, իր ծանոթների միջոցով իրացվեր:

Բացի այդ, Տիգրան Հակոբյանն ապօրինի ձեռք էր բերել եւ իր մոտ պահել 0,03 գրամ հոգեմետ «դիազեպամ» տեսակի 8 դեղահաբ:

Իսկ Մուրադ Բաղդասարյանն էլ, ըստ մեղադրողի, աշխատելով ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում, հանդիսանալով պաշտոնատար անձ, անձնական շահագրգռվածությունից ելնելով, պաշտոնեական դիրքն օգտագործել էր ծառայության շահերին հակառակ, էական վնաս էր պատճառել պետության շահերին: Նա եղել է Տիգրան Հակոբյանի «տանիքը»:

Եվ տանիքային էր այնքան, որ իմանալով Հակոբյանի հանցագործությունների մասին, իմանալով, որ նա 2010թ. փետրվարի 8-ից գտնվում է հետախուզման մեջ, անգամ գտնվելու փաստացի տեղը, համագործակցել է նրա հետ՝ «որոշակի դերակատարում է» ունեցել:

Ապացույցների հետազոտման կարգի համաձայն, պետք է առաջինը լսեին տուժողներին: Սակայն ամբաստանյալ Տիգրան Հակոբյանի պաշտպանը խնդրեց հետաձգել դատական նիստը, պատճառաբանելով, որ առողջական վիճակը բավարար չէ:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Սեւքարի դպրոցում անառողջ կրքերը շարունակվում են

Նախկինում (17.01.2012, 18.01.2012) տեղեկացրել ենք, որ սամբո ըմբշամարտի խմբի գործունեության հետ կապված հակամարտության պատճառով՝ իր դիմումի համաձայն հրաժարական է տվել Իջեւանի տարածաշրջանի Սեւքար գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Սամվել Ճաղարյանը: Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանի փետրվարի 1-ի որոշումով Սեւքարի դպրոցի տնօրենի պաշտոնակատար է նշանակվել այդ դպրոցի ուսուցչուհի Մարուսյա Բալասանյանը, մինչ մրցույթով կզբաղեցվի տնօրենի թափուր պաշտոնը: Սակայն Սեւքարի դպրոցում կրքերը չեն հանդարտվում: Սեւքարի բնակիչները «Առավոտի» թղթակցին հայտնեցին, որ գյուղի դպրոցի քիմիայի ուսուցչուհի Նաիրա Թանանյանն իրեն տնօրենի պաշտոնակատար նշանակելու պահանջով դպրոցում եւ գյուղում ստորագրություններ է հավաքում: Դպրոցում այդ կապակցությամբ լարվածություն է ծագել, ուսուցչուհիները հնարավորինս փորձում են խուսափել դիմումի տակ ստորագրելուց, մանկավարժական կոլեկտիվի 40 անդամներից մոտ 15-ն են ստորագրել: Սեւքարում տարածված խոսակցությունների համաձայն՝ Նաիրա Թանանյանին տնօրեն նշանակելու գործին օժանդակում է Տավուշի մարզպետարանի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը: Զարմանալին այն է, որ Նաիրա Թանանյանը բարձրագույն կրթություն չունի, ավարտել է ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի քոլեջը, սակայն օրենքը պահանջում է, որպեսզի դպրոցի տնօրենը լինի բարձրագույն կրթությամբ: Սեւքարի գյուղապետ Վլադիմիր Մարգարյանը մեզ հետ զրույցում ասաց, որ ինքն էլ է լսել Նաիրա Թանանյանի օգտին ստորագրություններ հավաքելու գործընթացի մասին:



Տավուշի մարզպետարանի կրթության վարչության պետ Աշոտ Փաշինյանն ասաց, որ հինգ օր առաջ մամուլում պետք է հայտարարություն տպագրված լիներ Սեւքարի դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի մասին, սակայն չնշեց, թե որտեղ է տպագրվել այդ հայտարարությունը: Բազմիցս փաստերով նշել ենք, որ Տավուշի մարզի դպրոցներում խախտվում է դպրոցների տնօրենների պաշտոնակատարների նշանակման կարգը, սակայն ԿԳՆ-ն այդ ամենի վրա պարզապես աչք է փակում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Գողության գործը

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Մխիթար Պապոյանի նախագահությամբ, պետք է շարունակվեր «Մոսկվա» կինոթատրոնում կատարված գողության գործով Ստեփան Հովակիմյանի եւ Վահրամ Քերոբյանի դեմ հարուցված քրեական գործի դատաքննությունը: Վահրամ Քերոբյանը հրաժարվեց իր պաշտպանից՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ Գիվի Հովհաննիսյանից, որը, սակայն, դատարան չէր էլ եկել:

Դատարանն արձանագրեց, որ պաշտպանը չի ներկայացել դատական նիստի, իսկ ամբաստանյալն էլ առանց պաշտպանի է, եւ հետաձգեց դատաքննությունը: Դատական նիստը նշանակվեց ապրիլի 19-ին:

Ռ. Մ.

## Դեղորայքային թունավորում

Երեկ արտակարգ իրավիճակների նախարարությունից տեղեկացրին, որ դեղորայքային թունավորումով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Մամիկոնյանց 58ա շենքի 27-րդ բնակարանի բնակիչ՝ 70-ամյա Գագիկ Բաղդասարյանը: Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

## Գործարանի տանիքը

ԱԻՆ փրկարար ծառայություն ահազանգ էր ստացվել, որ հրդեհ է բռնկվել Տավուշի մարզի Գետահովիտ գյուղում՝ «Յուղվարդ» պանրի գործարանի տարածքում: Այրվել էին գործարանի տանիքը եւ բուսածածկ տարածքը:

## Բախում՝ շտապօգնության մեքենային

Շտապօգնությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 22.50-ի սահմաններում՝ Երեւանի Գրիգոր Լուսավորչի եւ Բեյրութի փողոցների խաչմերուկում տեղի է ունեցել ավտոպատահար: Դեռեւս չպարզված հանգամանքներում բախվել են շտապօգնության ծառայության «Ֆորդ Տրանզիտ» եւ «Կրայսլեր» մակնիշի ավտոմեքենաները: Պատահարի հետեւանքով «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ 1984թ. ծնված Վարդան Ներսիսյանը, բուժքույր՝ 1965թ. ծնված Ռիմա Գեւորգյանը եւ բժիշկ՝ 1983թ. ծնված Կարեն Սիմոնյանը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ու տեղափոխվել «Էրեբունի» բժշկական կենտրոն:

## Դատախազները կայցելեն Տեր-Սահակյանին

«Առավոտում» երեկ տպագրված «Վանո Սիրադեղյանի մերձավորը «դարի հայտարարություն» կանի» հրապարակման կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի մամուլի քարտուղար Սոնա Տռուզյանը փոխանցեց հետեւյալը. «ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության, ինչպես նաեւ պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության դատախազները կայցելեն արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ եւ կընդունեն ցմահ ազատազրկման դատապարտված Արմեն Տեր-Սահակյանին: Ինչ վերաբերում է հրապարակման մեջ Տեր-Սահակյանի կողմից առաջ քաշված իր գործը վերսկսելու պահանջին, ապա այդ գործով կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, եւ նոր քննություն սկսելու հարցը կքննվի Տեր-Սահակյանի հայտարարությունից հետո:

Հիմնավոր լինելու դեպքում կքննվի այդ հարցը»:

Ռ. Մ.

# Բեմական զուգընկերությունը «լրացվի» ընտանեկանով

## Օպերային երգիչներ Գեւորգ Հակոբյանն ու Աննա Այվազյանը կամուսնանան

Օպերային արվեստում ամուսնական զույգերի ներկայությունը հաճելի է այն առումով, որ ձեւավորվում է ավելի քան ջերմ ու անուշ ստեղծագործական մթնոլորտ: Մյուս կողմից՝ մեկ հարկի տակ գտնվելը նպաստում է ամուսինների նաեւ գեղարվեստական համախոհությանը: Չի բացառվում, որ աշխարհահռչակ ամուսնական այնպիսի զույգերի, ինչպիսիք են Ռոբերտո Ալանիան ու Անջելա Գեորգիուն, Նիկոլայ Գյաուրովն ու Միրելա Ֆրենին, Ալեքսանդր Պիավկոն ու Իրինա Արխիպովան, Տիգրան Լեւոնյանն ու Գոհար Գասպարյանը, Պետրե Ամիրանաշվիլին ու Մեդեա Անջափարիձեն, Մուսլիմ Մագոմաեւն ու Թամարա Սինյավսկայան, եւ մյուսների հաջողությունների մեջ կարեւոր դեր է խաղացել նաեւ համատեղ ապրելու հանգամանքը:

«Առավոտի» տեղեկություններով, ազգային օպերային թատրոնի մեներգիչներ՝ ճանաչված բարիտոն, ՀՀ վաստակավոր արտիստ Գեւորգ Հակոբյանի եւ մեցո սոպրանո Աննա Այվազյանի բեմական զուգընկերությունն առաջիկայում «լրացվելու» է ընտանեկանով: Առաջին անգամ նրանց հանդիպեցինք 2008թ. Դավիթ Բեկի եւ Թամարի դերերում՝ Գեղամ Գրիգորյանի ռեժիսուրայով բեմադրված Տիգրանյանի «Դավիթ Բեկում», վերջերս էլ երկրորդ անգամ, նույն բեմադրիչի աշխատանքում՝ Չուխաջյանի «Արշակ Երկրորդում»՝ Արշակի եւ Փառանձեմի գլխավոր դերերգերով: Պետք էր տեսնել, թե ինչ քնքշությամբ ու ոգեւորությամբ Արշակ թագավորը դիմեց Փառանձեմ թագուհուն՝ հայտնի արիայով. «Օ՜, ինչ գեղեցիկ ես, Փառանձեմ, նման սեգ դիցուհու աստղային...»: Դա չէր վրիպել հետաքրքրասեր հանդիսատեսի ուշադրությունից:



Ավելորդ ենք համարում խոսել բարձրակարգ երիտասարդ արտիստների վոկալ եւ կերպարային ներդաշնակության մասին: Երկուսն էլ ավարտել են Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, անվանի մանկավարժ Սերգեյ Դանիելյանի դասարանը:

«Առավոտը» հանդիպեց Աննա Այվազյանին: Զրույցի սկզբում ընդամենը համաձայնության ժպիտն էր մեր հետաքրքրության պատասխանը իր եւ Գեւորգ Հակոբյանի միջեւ փոխադարձ զգացմունքների առկայությանը:

Հետաքրքրվեցինք, թե ինչու երգչուհուն հաճախ չենք տեսնում խաղացանկային ներկայացումներում: Նշելով, որ իբրեւ մեներգչուհի թատրոնում է 2007 թվականից, պատրաստել է Աննայի դերերգը Հարությունյանի «Սայաթ-Նովայում», Կարմենինն ու Մերսեդեսինը՝ Բիզեի «Կարմենում», Գայանեինը՝ Սպենդիարյանի «Ալմաստում», մեր զրուցակիցը ոչ հաճախ իր բեմելները պատճառաբանեց սեփական խստապահանջությամբ: Նա հավելեց նաեւ, որ «Արշակ Երկրորդում» Փառանձեմի կերպարի մարմնավորումը հասունացել էր, ինչի մասին արտահայտվել էին թե՛ գործընկերները, թե՛ թատրոնի գլխավոր դիրիժոր Կարեն Դուրգարյանը:

Աննա Այվազյանը տեղեկացրեց նաեւ Երեւանի կոնսերվատորիայի Դ. Սարյանի անվան օպերային ստուդիայում կատարած աշխատանքների մասին: Դրանք են՝ Բերտան՝ Ռոսինիի «Սեւիլյան սափրիչ», Ալիսան՝ Դոնիցետիի «Լուչիա դե Լամերմուր» ներկայացումներում, ինչպես նաեւ Զետան, Ֆրուգոլան եւ Արքայադուստրը՝ համապատասխանաբար Պուչինիի «Ջանի Սկիկի», «Թիկնոցը» եւ «Քույր Անժելիկան» բեմադրություններում: Աննա Այվազյանը հիշեց ճանաչված դիրիժոր Պավել Գեյնշտեյնի նվագախմբի հետ կայացած իր համերգները՝ Պերմ-Փարիզ-Մոսկվա Դյագիլեւյան փառատոնի շրջանակներում:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## «Լավ սովորելու համար լավ լսարանն անհրաժեշտություն է»



Երեկ Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանում բացվեց գծանկարի ու գունանկարի մասնագիտացված լսարան: Այն վերանորոգվել է ՀՀ վաստակավոր շինարար Լեւոն Շահբազյանի ընտանիքի կողմից: ԵՃՇՊՀ ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը «Առավոտի» հետ զրույցում նշեց, որ ողջունելի է համալսարանում նման լսարան ունենալը. «Այն համապատասխանում է միջազգային չափանիշներին: Լուսավորվում է բոլոր կողմերից, ընդարձակ է, հարմար՝ աշխատելու համար: Սա թվով հինգերորդ նմանատիպ լսարանն է, որ բացում ենք մեզ մոտ: Այստեղ կնկարեն ուսանողները, 4-10 տարեկան երեխաները, նաեւ դասախոսները»:

Ռեկտորի խոսքերով, լավ սովորելու համար լավ լսարանը ոչ թե պարտադիր է, այլ՝ անհրաժեշտություն: Ըստ նրա, համալսարանը տաղանդավոր երեխաների պակաս չունի, եւ իրենց ուսանողը կարող է ցանկացած երկրում լավ մասնագետ լինել:

Գծանկարի ու գունանկարի բաժնի ուսանողները տեղում նկարեցին նատյուրմորտ:

Լսարանի բացմանը ներկա էին նաեւ ՀՀ փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը, ԿԳՆ փոխնախարար Մանուկ Մկրտչյանն ու արվեստագետներ:

ԱՐԱՄ ԱՐԱՐԱՏՅԱՆ

# Օսկանյանն ու Աշոտյանն ակտիվ են Facebook-ում, Զոհրաբյանի պատն էլ փակ էր

## «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի տնօրեն Լաուրա Բաղդասարյանի Facebook-ում են ընտրողներն ու ընտրվողները

Երեկ «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի տնօրեն Լաուրա Բաղդասարյանը (լուսանկարում՝ ձախից) «Հայելի» ակումբում ներկայացրեց «Facebook-ը որպես նախընտրական հարթակ Հայաստանում» թեմայով ուսումնասիրության արդյունքները:

Տիկին Բաղդասարյանը փաստեց, որ Facebook-ում գնալով մեծանում է հայաստանցի պատգամավորների, քաղաքական գործիչների թիվը: Մարտի տվյալներով՝ Facebook-ի օգտատերերի թիվը 290840 է, ինչը մոտ 2/3-րդն է Հայաստանում լայնաշերտ ինտերնետից օգտվողների քանակի: Բանախոսի ասելով, 290840 օգտատերերը հայաստանցիներ են կամ նրանց միավորումները, որոնք, այսպես թե այնպես, ապրում են Facebook-ում, այսինքն՝ ստացվում է, որ նրանք ըստ էության այս խորհրդարանական ընտրությունների ընտրողներն ու ընտրվողներն են: Ուսումնասիրության հեղինակները պարզել են, որ Facebook-ում բավական ակտիվ են նույնիսկ այն կուսակցությունները, որոնք ըստ էության քարոզչական հավելյալ միջոցների անհրաժեշտություն չունեն: «Օրինակ՝ ՀՀԿ-ն, որին սպասարկում է միանգամից մի քանի հեռուստաընկերություն, ԲՀԿ-ն, որին սպասարկում է «Կենտրոն» TV-ն, ՀՅԴ-ն, որն ըստ էության ունի «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունը, իսկ հեռուստաընկերությունները մինչեւ վերջերս համարվում էին Հայաստանում քարոզչական ժամանակահատվածի ամենահզոր միջոցները»,- ասում է տիկին Բաղդասարյանը:



Նրա համոզմամբ, այն հանգամանքը, որ Facebook-ում անցյալ աշնանից սկսած՝ սկսեցին գրանցվել բազմաթիվ կուսակցություններ, պատգամավորներ եւ քաղաքական գործիչներ, ազդանշան է այն բանի, որ այս խորհրդարանական ընտրությունները պետք է լինեն առաջինը Հայաստանի ընտրական գործընթացների պատմության մեջ, որտեղ Facebook-ը շատ լուրջ քարոզչական դերակատարություն է ստանալու՝ նշանակությամբ եւ ազդեցությամբ գերազանցելով այնպիսի հզոր միջոցի, ինչպիսին հեռուստատեսությունն է: «Facebook-ի առավելությունը հեռուստատեսության համեմատ այն է, որ այստեղ չկան այնպիսի հասկացություններ, ինչպես չափից շատ տեղեկատվությունը, կոպիտ քարոզչությունը եւ այն ամենը, ինչը բնորոշ է դասական ԶԼՄ-ներին... Facebook-ը «բաց» հարթակ է կուսակցությունների համար, որտեղ նրանք կարող են ցանկացած չափի քարոզչություն վարել իրենց մշտական օգտատերերի հետ եւ դրա դիմաց չվճարել ոչինչ»,- փաստում է «Ռեգիոնի» տնօրենը:

Ուսումնասիրվել են ոչ միայն 1in.am, Tert.am, News.am, Zham.am, 7or.am լրատվամիջոցների ֆեյսբուքյան էջերը, այլեւ կուսակցությունների եւ առանձին գործիչների: Առավել ակտիվ գործունեություն են ծավալել ՀՀԿ-ից Արմեն Աշոտյանն ու Կարեն Ավագյանը, ՀՀԿ պաշտոնական էջը, ՀՅԴ-ից՝ Լիլիթ Գալստյանը, Վահան Հովհաննիսյանն ու Արմեն Ռուստամյանը, ՀԱԿ-ից՝ Լեւոն Զուրաբյանը, Արամ Մանուկյանը, Հրանտ Բագրատյանը, «Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցություններից՝ Ստյոպա Սաֆարյանը, Զարուհի Փոստանջյանն ու Կարապետ Ռուբինյանը: Ըստ տիկին Բաղդասարյանի, ՕԵԿ-ը պասիվ է Facebook-ում, կոմունիստները՝ չկան: Նրա տեսանկյունից՝ ԲՀԿ-ից ակտիվ են Գագիկ Ծառուկյանը, Վարդան Օսկանյանը եւ ԲՀԿ պաշտոնական «պատը»: ՕԵԿ-ից Facebook-ում ներկայացված չէ Հեղինե Բիշարյանը, ԲՀԿ-ից Նաիրա Զոհրաբյանը մինչեւ վերջերս ուներ «փակ պատ», իսկ ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանի պատը ակտիվ է, բայց ավելի շատ պաշտոնական բնույթի է, որտեղ ոչ մի երկխոսություն չկա, եւ ընդամենը նյութեր են «կախվում»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Ա aravot daily
ՈՒՐԲԱԹ 13.04.2012

VIVAcell MTS

# ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Ռոբերտ Շտիգլից. «Արթուր Աբրահամի ուժը երկրորդ միջին քաշային կարգին չի բավականացնում»



WBO վարկածով երկրորդ միջին քաշային կարգում աշխարհի չեմպիոն, գերմանացի Ռոբերտ Շտիգլիցի կարծիքով՝ միջին քաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Արթուր Աբրահամի համար զգալիորեն դժվար է պայքարել ավելի բարձր քաշային կարգում:

Սպասվում է, որ Աբրահամի հաջորդ մրցակիցը լինելու է մայիսի 5-ին կայանալիք Ռոբերտ Շտիգլից-Ջորջ Գրաուվզ դիմակայության հաղթողը: Այս մասին քաջատեղյակ գերմանացին արդեն իր կարծիքն արտահայտել է «Sportbox» հանդեսում: «Դիտել եմ Աբրահամի եւ Պետեր Վիլչեւսկու մենամարտը: Լեհը լավ մրցակից էր: Բայց ես այլ մակարդակի բռնցքամարտիկ եմ: Բացի դա, վերջին մարտերում պարզորոշ նկատվում է, որ Աբրահամին անհամեմատ դժվար է մեր՝ երկրորդ միջին քաշային կարգում, որտեղ նա զրկված է իր համար սովորական ֆիզիկական առավելությունից»:

## Կմասնակցեն «Շեյխի գավաթին»



Հայաստանցի գրոսմայստերներ Վլադիմիր Հակոբյանը, Տիգրան Լ. Պետրոսյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Զավեն Անդրիասյանը, Ավետիք Գրիգորյանը, Դավիթ Պետրոսյանը եւ պատանի շախմատիստներ Կարեն Գրիգորյանն ու Վահե Բաղդասարյանը պատրաստվում են մասնակցել ապրիլի 15-ից 24-ը Միացյալ Արաբական Էմիրություններում կայանալիք «Շեյխի գավաթ» ավանդական միջազգային մրցաշարին:

Այս մասին տեղեկացնում է «Armchess.am»-ը:

## Էստոնիայում մանկապիղծ մարզիչ է ձերբակալվել



Էստոնիայի ոստիկանությունը մանկապղծության մեղադրանքով ձերբակալել է այդ երկրի ձիասպորտի ճանաչված մարզիչներից մեկին՝ 62-ամյա Վելլո Կուդրյավցեւին, որը 2007-ից 2011 թվականները դպրոցահասակ տղաների եւ աղջիկների համար պարբերաբար կազմակերպել է ամառային ճամբարներ եւ արտասահմանյան ուղեւորություններ: Տեղի լրատվամիջոցների հրապարակումներից հայտնի է դարձել, որ այդ ժամանակ նա, իր անձնական պահանջները բավարարելու նպատակով, բռնություններ է կիրառել, մանկական պոռնոներ կազմակերպել, հարբեցրել եւ պղծել է անչափահասներին:

Էստոնիայի ձիասպորտի միությունը պաշտոնական հայտարարություն է տարածել, որ այդ մարզիչն արդեն տասը տարի իրենց մոտ գրանցված չէ:

Գործով անցնում է 10 անչափահաս երեխա:

## Գավաթը կվիճարկեն «Շիրակը»



## եւ «Իմպուլսը»

Երեկ կայացավ Ֆուտբոլի Հայաստանի գավաթի 2011/2012 խաղարկության կիսաեզրափակչի երկրորդ պատասխան հանդիպումը: Երեւանում «Միկան» սեփական հարկի տակ ընդունեց «Շիրակին», որին առաջին խաղում նրա դաշտում հաղթել էր նվազագույն 1:0 հաշվով: Գյումրեցիները, որոնք այս մրցաշրջանում հաջող մրցելույթներ են ունենում, աչքի ընկան կամային որակներով եւ 2:1 հաշվով առավելության հասնելով՝ երկու հանդիպումներում հասան ոչ-ոքիի: Սակայն մրցակցի դաշտում ավելի շատ գնդակ խփելու շնորհիվ «Շիրակը» մտավ եզրափակիչ: Գյումրեցի ֆուտբոլիստները ապրիլի 29-ին սեփական հարկի տակ վճռորոշ խաղում պատվավոր մրցանակի համար կհանդիպեն Դիլիջանի «Իմպուլսի» հետ, որն իր հերթին նախորդ օրը 2:1 հաշվով պարտության էր մատնել հանրապետության չեմպիոն «Ուլիսին» (առաջին խաղն ավարտվել էր գոլազուրկ ոչ-ոքիով) եւ իր պատմության մեջ առաջին անգամ եզրափակչի ուղեգիր նվաճել:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ



# Արցախյան էսքիզներ

## Հայաստանցի դպրոցականներն ու ուսանողները հյուրընկալվեցին արցախյան մանկապարտեզում, դպրոցում եւ զորամասում

«Երիտասարդության կամք» երիտասարդական հ/կ-ն օրերս նախաձեռնել էր ռազմահայրենասիրական ծրագիր դեպի Արցախ՝ նվիրված Մատաղիսի ազատագրման 18, եւ Հայկական բանակի 20-ամյակներին: «Երիտասարդության կամքի» պատվավոր անդամ Արման Ջոհրաբյանը զոհվել էր Մատաղիսի ազատագրման համար մղվող մարտում: Ծրագրին մասնակցեցին Երեւանի թիվ 50 դպրոցի (դպրոցի ՆԶՊ դասարանը կրում է Արման Ջոհրաբյանի անունը) 12-րդ դասարանի 10 աշակերտ, բուհերի զորակոչային տարիքի 10 երիտասարդ, կազմակերպության անդամները, հերոսի մարտական ընկերներն ու հարազատները:

Ժամանելով սահմանամերձ Մատաղիս գյուղ՝ երիտասարդներն այցելեցին տեղի մանկապարտեզ, որին նվիրեցին տեսաձայնագրիչ, խտասկավառակներ եւ գրականություն, իսկ երեխաները հանդես եկան ասմունքով եւ երգերով: Մատաղիսի մանկապարտեզն ունի 27 սան: «Առավոտի» հետ զրույցում դաստիարակչուհի Լիանա Հարությունյանը նշեց, որ մանկապարտեզի սաների թիվը տարեցտարի ավելանում է: Թիվ 50 դպրոցի 12-րդ դասարանցիները դպրոցական պայուսակներ նվիրեցին երեխաներին: Թիվ 50 դպրոցի տնօրեն Սոս Վարդանյանը ցանկացավ, որ մատաղիսցի առաջին դասարանցիների թիվն ամեն տարի ավելանա, մեր ազգն էլ ավելի ամուր լինի, իսկ Հայաստան-Ղարաբաղ տարանջատումը վերանա: Կարեւորելով երիտասարդության ներուժը երկրի զարգացման գործում՝ «Երիտասարդության կամքի» նախագահ Աննա Գրիգորյանը նշեց, որ հենց մանկապարտեզից պետք է հայրենասեր սերունդ դաստիարակել: Խումբն այցելեց նաեւ Մատաղիսի դպրոց, որտեղ բացվեց զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված փառքի անկյուն, ամփոփվեցին Մատաղիս եւ Տոնաշեն գյուղերի դպրոցների աշակերտների միջեւ նախօրոք հայտարարված «Ես եմ իմ երկրի ժառանգորդն ու տերը» թեմայով շարադրության արդյունքները: Դպրոցին նվիրվեց հայրենասիրական եւ ռազմահայրենասիրական գրականություն, խտասկավառակներ, 200 անուն գեղարվեստական գրականություն, սպորտային գնդակներ եւ պարագաներ: Ղարաբաղյան պատերազմի ականատես եւ դպրոցի դասվար Նելլա Գաստարյանը, ով 1994թ. Մատաղիսի գյուղապետն էր, 18 տարի անց կրկին հանդիպեց ու գրկեց ազատամարտի մասնակից Սրապիոն Գեւորգյանին, ով խմբի հետ Արցախ էր ժամանել: Մատաղիսի պաշտպանության ժամանակ նա ընդամենը 17 տարեկան էր:



«Երանի այդ օրերին, թեկուզ եւ կրակի եւ մահվան վտանգի տակ էինք... Ամեն կերպ օգնում էինք իրար՝ դպրոցը հիմնել, որպեսզի գյուղում զանգի ձայն հնչի»,- արցունքն աչքերին՝ ասաց տիկին Գաստարյանը: 1992թ. հունիսի 16-ին Մատաղիսում համարյա բնակիչ չէր մնացել, 200 մարդ լքել էր գյուղը, իսկ երկու տասնյակ ծերեր եւ հաշմանդամներ սպանվել ադրբեջանցիների կողմից: Գյուղի ազատագրման համար պայքարում զոհվել է 370 մարդ: Հիմա էլ գյուղում գրեթե յուրաքանչյուր քայլափոխի զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշաքարեր են: Ազատամարտիկ Սրապիոն Գեւորգյանը նշեց, որ Արցախում յուրաքանչյուր քարի նայելիս հիշում է զոհված ընկերներին եւ իրենց դժվարին պայքարը. «Հիշում եմ՝ ինչպես էինք շաբաթներով սոված մնում, սնվում արմատներով, օձերով ու շնագայլերի մսով: Ցանկանում եմ, որ այսօրվա երիտասարդությունը չապրի իմ տեսածը, որ ոչ մի աղջիկ լաց չլինի ու տագնապով սպասի սիրելիի վերադարձին»:

Այցելությունը Արցախ եզրափակվեց տեղի N զորամասում կայացած համերգային ծրագրով: Իր ելույթում «Երիտասարդության կամք» հ/կ-ի նախագահ Աննա Գրիգորյանը նշեց, որ հպարտ է Արցախ մտնող ցուցանակի վրա կարդալով «Ազատ Արցախը ողջունում է ձեզ» գրությունը. «Մենք իրավունք ունենք այս արեւի տակ ազատ ապրելու: Հայը չպետք է լացով հիշի անցյալը, այլ պետք է աշխատի՝ Հայաստանը շենացնելու համար: Հայ տղամարդը վերջապես հասկացավ, որ վիզայի փոխարեն պետք է ձեռքը զենք վերցնի»:

Միջոցառման ընթացքում զինվորական զորամասի ստորաբաժանումների միջեւ անցկացվեցին ինտելեկտուալ խաղեր, բազկամարտի մրցումներ, ապա ամփոփվեցին «Ես եմ հայրենիքի պաշտպանը» թեմայով շարադրության մրցույթի արդյունքները, լավագույն երեք աշխատանքների հեղինակ զինվորները խրախուսվեցին պատվոգրերով եւ նվերներով: Երիտասարդ ուխտավորները 2 օր շարունակ ապրեցին զինծառայողների կողքին՝ ծանոթանալով նրանց առօրյային: Թիվ 50 դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ եւ ապագա զինծառայող Նարեկ Հակոբյանը նշեց. «Արցախում դժվար է ծառայել, իսկ Երեւանում բարենպաստ պայմաններ կան զինվորների համար: Հետեւաբար, ավելի լավ է այստեղ ծառայել, որքան դժվար՝ այնքան էլ հետաքրքիր»:

Հավելենք, որ միջոցառմանն աջակցել էին ՀՀ ԿԳ եւ պաշտպանության նախարարությունները եւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ